Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի  Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն  Տ Ա Վ Ո Ւ Շ Ի  Մ Ա Ր Զ Պ Ե Տ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 հունվարի 2011թ. թիվ 7-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով "Զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության կառավարության "Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, մարզի տարածքում գտնվող կազմակերպությունների /անկախ սեփականության ձևից/ զորահավաքային նախապատրաստության կարգը հաստատելու մասին" որոշումը՝

ո ր ո շ ու մ  ե մ.

1. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի զորահավաքային նախապատրաստության և զորահավաքային պլանի մշակման աշխատանքները համակարգելու նպատակով ստեղծել զորահավաքային մարմին՝ ըստ հավելված 1-ում տրված կազմի:
2. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի զորահավաքային մարմնին՝ մարզի զորահավաքային նախապատրաստության և զորահավաքային պլանի մշակման աշխատանքների իրականացման նպատակով՝
   1) մարզի 10.000-ից ավելի բնակչություն ունեցող համայնքներում զորահավաքային նախապատրաստության և զորահավաքային պլանների մշակման աշխատանքների կատարման համար ստեղծել զորահավաքային համայնքային մարմիններ
   2) մարզի մինչև 10.000 բնակիչ ունեցող համայնքներում զորահավաքային նախապատրաստության և զորահավաքային պլանների մշակման աշխատանքներին ըստ անհրաժեշտության ներգրավել համապատասխան համայնքի ղեկավարին
   3) համակարգել մարզի համայնքների և զորահավաքային առաջադրանքներ ունեցող կազմակերպությունների զորահավաքային նախապատրաստության և զորահավաքային պլանների մշակման աշխատանքները
   4) մինչև 2011 թվականի փետրվարի 1-ը մշակել մարզի զորահավաքային պլանում ընդգրկվող զորահավաքային նախապատրաստության միջոցառումների ցանկը՝ ըստ կատարման ժամանակացույցի
   5) կազմակերպել մարզի համայնքների և զորահավաքային առաջադրանքներ ունեցող կազմակերպությունների զորահավաքային նախապատրաստության և զորահավաքային պլանների մշակման մեթոդական և ուսումնավարժական աշխատանքները
   6) համագործակցել հանրապետության զորահավաքային աշխատանքները համակարգող և պետական այլ մարմինների զորահավաքային մարմինների հետ՝ հանրապետության զորահավաքային պլանի մշակման աշխատանքներում:
3. Սույն որոշման կատարման վերահսկողությունը վերապահում եմ ինձ:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

26 հունվարի 2011թ.
ք. Իջևան

Հավելված 1

Հաստատված է ՀՀ Տավուշի մարզպետի
2011թ. հունվարի 26 -ի թիվ 7-Ա որոշմամբ

# Կ Ա Զ Մ

## ՀՀ Տավուշի մարզի զորահավաքային մարմնի

| | | |
|---|---|---|
| Ա.ՂՈՒԼԱՐՅԱՆ | - | ՀՀ Տավուշի մարզպետ |
| Լ. Սարգսյան | - | ՀՀ Տավուշի մարզպետի տեղակալ |
| Վ.Վարդապետյան | - | ՀՀ Տավուշի մարզպետի տեղակալ |
| Ա. Չոբանյան | - | ՀՀ ԱԱԾ Տավուշի մարզային վարչության պետ |
| Վ. Վարդանյան | - | ՀՀ Ոստիկանության Տավուշի մարզային վարչության պետ |
| Գ. Մատինյան | - | ՀՀ ԱԻՆ Տավուշի մարզային ՔՊ շտաբի պետ |
| Վ. Սարգսյան | - | ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ, ինժեներական ծառայության պետ |
| Ռ. Մելիքջանյան | - | ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ, բույսերի և կենդանիների պաշտպանության ծառայության պետ |
| Կ. Դովլաթբեկյան | - | ՀՀ Տավուշի մարզպետի խորհրդական, բժշկական ծառայության պետ |
| Ռ. Ներսեսյան | - | ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ, առևտրի և սննդի ծառայության պետ |
| Ա. Սարգսյան | - | ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի վարիչ, տրանսպորտի ծառայության պետ |
| Մ. Ղալումյան | - | ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ, կոմունալ-տեխնիկական ծառայության պետ |
| | - | Նյութատեխնիկական մատակարարման պետ |
| Ս. Գևորգյան | - | ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության առաջատար մասնագետ, բնապահպանական ծառայության պետ |
| Ա. Ղալթախչյան | - | "Հայաստանի էլեկտրական ցանցեր" ՓԲԸ "Աղստև" տեղամասի պետ, էներգետիկայի և լուսաքողարկման ծառայության պետ |
| Վ. Չոգինյան | - | "Բիլայն" Տավուշի գրասենյակի պետ, կապի և ազդարարման ծառայության պետ |
| Գ. Սարգսյան | - | Իջևանի զինկոմ |
| Գ. Ապինյան | - | Դիլիջանի զինկոմ |
| Դ. Պապյան | - | Բերդի զինկոմ |
| Գ. Գոգինյան | - | Նոյեմբերյանի զինկոմի պաշտոնակատար |

Համայնքի ղեկավարներ ըստ անհրաժեշտության /համաձայնությամբ/

ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ԴԱՎԹՅԱՆ